




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

25.195

332.11

7-48

332.11

Պ-48

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ՎԱՐԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ՊԵՏԱՐԱՏ

1932

ՅԵՐԵՎԱՆ

15 JAN 2010

332.11

9-48

47

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՎԱՐԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

2050

Բարգմ. ԴԲ. Զ.

ՊԵՏԱԿԱՆ



2017 1982

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

15185-57

ՕՆԵՆՎԱՆ

Պետերբուրգի տպարան
Դրավիտ 6934 (բ)
Հրատարակ. 1936
Պատվեր 6151
Ցիքած 2000

ՏՆՏԵՍԱՀԱՇԻՎՆ ԱՐՄԱՏԱՑՆԵԼՈՒ ՆՈՐ ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԲՈՒՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԿՈՒՄՆԵՐԻ ԿՆՏԿՈՄՆԵՐԻՆ, ՅԵՐԿՐԱՅԻՆ
ՅԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻՆ, ԲՈՒՈՐ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵ-
ՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂԿՈՄՆՈՐԶՆԵՐԻՆ, ՅԵՐԿՐԱՅԻՆ ՅԵՎ ՄԱՐ-
ԶԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻՆ

Ընթացիկ տարվա հուլիսի 23-ին Միութենական Ժողովուրդ-
հը հրատարակել է մի վորոշում՝ տնտրողանների սեփական շրջա-
նառու միջոցների և բանկային վարկի ժամկետայնության ու վե-
րադարձի մասին: Ժողովուրդհի այս վորոշումը դարգացնում է՝
վարկային ռեֆորմի ուղղումների մասին մարտի 20-ին կենտկոմի
և Ժողովուրդհի ընդունած վորոշումը:

Կենտկոմի և Ժողովուրդհի մարտի 20-ի վորոշման հիման
վրա՝

առաջին՝ պիտի վերացվեր բանկային վարկավորման ավտո-
մատիզմը, հաստատվեր ֆինանսական իրական կարգապահություն
և տնտրողանների վարկավորումը կատարվեր նրանց առաջադր-
ված պլանների կենսագործման ընթացքի համեմատ:

յերկրորդ՝ տնտրողանները պիտի անցնեյին պայմանագրային
հարաբերությունների, վորպիսի հարաբերությունները զորավիզ
պիտի հանդիսանային կուսակցության և կառավարության սահմա-
նած տնտեսական պլանների կատարումն ապահովելու համար:

Սակայն, կուսակցության վորոշած տնտեսահաշվի սկզբունք-
ները արմատացնելու համար պահանջվում էր, ինչպես այդ նա-
խատեսված էր կենտկոմի և Ժողովուրդհի մարտի 20-ի վորոշ-
մամբ, վերացնել դիմադրկությունը տնտրողանների սեփական և
փոխառու (բանկային) միջոցների ուղտագործման բնագավառում:
Դրա համար անհրաժեշտ էր նախ և առաջ՝ տնտրողաններին սե-
փական շրջանառու միջոցներ հատկացնել և յերկրորդ՝ բանկային
վարկը վերադարձնելի ու ժամկետային դարձնել:

Այն հանգամանքը, վոր միավորությունները (об'єдинение),
որեստներն ու ձեռնարկություններն ապահովվում են սեփական
շրջանառու միջոցներով, վոր բանկային վարկը տրամադրվում է
միմիայն ապրանքների արտադրության ու շրջանառության պար-
զորոշ կարիքների համար և վոր այդ վարկը բացառապես տրվում
է վորոշված ժամկետներին վերադարձնելու հիմունքներով, — մի
խոշոր քայլ է դեպի առաջ՝ տնտեսահաշիվն ամրապնդելու համար:

և միաժամանակ՝ պայմանագրային կարգապահությունն ուժեղացնելու ու սահմանված տնտեսական պլանները իրագործելու համար: Տնտեսության խտրոքն սահմանագծված կարիքների վարկավորումը և բանկային վարկի ժամկետային վերադարձը բանկի համար մի նոր գնեք և ծառայում՝ տնտրողանների աշխատանքը ուղղում միջոցով իրական վերահսկողության (կոնտրոլի) յենթարկելու համար: Սեփական չրջանառու միջոցների որևէի հաստատմամբ տնտրողանների վրա անմիջական պատասխանատվություն և ընկնում՝ նրանց հանձնված չրջանառու միջոցները առավելագույն արդյունավետությամբ ոգտագործելու, այդ միջոցները պահպանելու և լրացնելու համար: Սա բարձրացնում է տնտրողանների շահագրգռությունը իրենց ներքին կուտակումները ծավալելու գործում և գրանով իսկ ուժեղացնում է կուտակյություն դիրքերը՝ սոցիալիստական շինարարության բայլչեիկյան տեմպերի համար մղվող պայքարում:

Տնտրողանների համար պահանջվող սեփական չրջանառու միջոցների թվարկման աշխատանքը, ինչպես և վարկավորման սխեմներ բանկային վարկի վերադարձի ու ժամկետայնության հիմունքներով մշակելու գործն արդեն ավարտված է: Նոյեմբերի 1-ից լուծարելի պիտի յենթարկվեն միասնական կոնտրոլորենաները, վորոնք արտացոլում էլին սեփական ու փոխառու միջոցների միջև յեղած դիմադրելությունը: Յուրաքանչյուր մի տնտրողանին բանկը պիտի բացի առանձին հաշվարկային հաշիվներ՝ նրանց սեփական միջոցների համար և առանձին փոխառական հաշիվներ՝ նրանց փոխառու միջոցների համար: Տնտրողանները ստանում են անհրաժեշտ հնարավորություն՝ ադատորեն տեղաշարժելու (անորինելու) իրենց սեփական չրջանառու միջոցները պլանների և պայմանագրերի սահմաններում: Նոյեմբերի 1-ից բանկը տնտրողաններին փոխառություններ կտրամադրի միմիայն այն դեպքում, յերբ այդ փոխառությունների դիմաց նյութական ապահովություն լինի և բանկային վերադարձ վարկի որյեկտի առկայությունը փաստաթղթերով հաստատվի:

Կենտկոմն ու Ժողկոմխորհը բոլոր կուտակցական, խորհրդային և տնտեսական կադմակերպությունների ուչադրությունը բեվեում են այն հանգամանքի վրա, վոր սեփական չրջանառու միջոցների որևէը կենսագործելու նախապատրաստական աշխատանքը մինչ այժմ կրում է ապարատի վերնաշերտային բուռյթ և սահմանափակվում է Ֆինանսա-վարկային մարմինների նեղ չրջանակներով: Տնտրողանները և մանավանդ ձեռնարկություններն ընհանրապես չեն մասնակցում այդ նախապատրաստական աշխատանքին:

Կենտկոմն ու Ժողկոմխորհը նախադրուչացնում են, վոր վարկավորման նոր կարգը նոյեմբերի 1-ից պիտի կիրառվի առանց վորեև վերապահության: Վարկավորման նոր կարգի համար ջնախապատրաստվող տնտրողանները չեն կարող բանկից վարկեր ստանալ և այն դժվարությունների պատասխանատվությունը, վորոնց մեջ կընկնեն ձեռնարկությունները տնտրողանների անփութ-

թության ու անպատրաստակամության հետևանքով, կծանրանա վերջիններիս ղեկավարների վրա:

Կենտկոմն ու Ժողկոմխորհն առաջարկում են աղգային կոմիտեների կենտկոմներին, յերկրային և մարդային կոմիտեներին, դաշնակից հանրապետությունների Ժողկոմխորհներին, յերկրային ու մարդային գործադիր կոմիտեներին՝

1. Անմիջապես ստուգել Ֆինանսա-վարկային մարմինների և տնտեսական կադմակերպությունների նախապատրաստությունը՝ նոյեմբերի 1-ից վարկավորման նոր կարգին անցնելու համար և վերացնել այդ կադմակերպությունների նախապատրաստական աշխատանքների թերությունները, քանի վոր այդ թերությունները կարող են ծայր աստիճան բացասաբար անդրադառնալ բովանդակ տնտեսական աշխատանքի վրա:

2. Յերկրային կոմիտեների բյուրոներում անմիջապես լսել բանկի բաժանմունքների և խոշոր տնտրողանների վարիչների ղեկուցումները վարկավորման նոր կարգին անցնելու ապահովության մասին և անհրաժեշտ ձեռնարկումներ անցկացնելու պատասխանատվությունը դնել Յերկրային կոմիտեի քարտուղարներին մեկի վրա, հաղորդելով Կենտկոմին այդ ընկերով աղգանունը:

3. Այս հարցը դնել համապատասխան տնտեսական, պրոֆեսիոնալ և կուտակցական մարմինների աշխատողների ակտիվներում՝ բադմակողմանի կերպով պարզարանելով սեփական չրջանառու միջոցներին անցնելու նշանակությունը, ինչպես և բանկային վարկի ժամկետայնությունն ու վերադարձի նշանակությունը՝ տնտեսահաշիվը ամրապնդելու և Ժողովրդա-տնտեսական պլանը կենսագործելու համար:

4. Պարտավորեցնել տեղական մամուլին, վորպեսդի նա լայնորեն լուսաբանի վարկավորման նոր կարգին նախապատրաստվելու և անցնելու հարցերը, ապահովելով իրական բայլչեիկյան պայքար՝ ընդդեմ Ֆինանսա-վարկային ու տնտեսական մարմինների թերությունների, վորոնք կեկաավեն տվյալ խնդրի իրագործման ընթացքում:

ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ՝ Վ. ՄՈՂՏՈՎ (ՍԿՐՅԱՐԻՆ)

Համկոմկուսի (Ի) կենտկոմի քարտուղար՝ ՍՍԱԼԻՆ

«Պրավդա» 21 հոկտեմբերի 1931 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՏՐԵՍՏՆԵՐԻ ՅԵՎ
ԱՅԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1930 թվի վարկային ռեֆորմի կենսադրժման պրակտիկայի ամենախոշոր թերություններից մեկը տնտեսական մարմինների սեփական շրջանառու միջոցների դիմադրելիությունն էր, ինչպես և սեփական ու փոխառու միջոցների ոգտադրժման պայմանների տարբերության վերացումը: Այս հանգամանքը մի կողմից թուլացնում էր տնտրողանների տնտեսական ու մանևլրային ընդունակությունը և մյուս կողմից՝ նվազեցնում նրանց շահագրգռությունն իրենց աշխատաքի ֆինանսական արդյունքների մեջ (ինքնարժեքի իջեցման, չահույթների կուտակման մեջ և այլն):

Տնտեսահաշիվը (хозрасчет) ամրապնդելու, արտադրության ու ապրանքաբաշխության միջոցների շրջանառությունն արագացնելու, տնտրողանների ու ձեռնարկությունների մանևլրային ընդունակությունը բարձրացնելու և նրանց շահագրգռությունն իրենց աշխատանքի ֆինանսական արդյունքների մեջ ուժեղացնելու նպատակով Աշխատանքի և Պաշտպանության խորհուրդը վորոշում է (ի զարգացումն ՈՍՀՄ Ժողկոմխորհի 1931 թ. ֆարտի 20-ին ընդունած՝ վարկավորման սխեմի վրա փոխելու, վարկային աշխատանքը ամրացնելու և բոլոր տնտրողաններում տնտեսահաշիվն ապահովելու մասին վորոշման):

1. Պետական միավորությունների, տրեստների և այլ տնտեսական կազմակերպությունների սեփական շրջանառու միջոցների քանակը համապատասխանության մեջ դնել այն միջոցներին հետ, վորոնց կարիքը նրանք զգում են՝ հումքի, արտադրական ու ոժանդակ նյութերի, վառելիքի, կիսաֆարրիկատների, չափարոված արտադրության և պատրաստի ապրանքների, նվազագույն պաշարն, ինչպես և հետագա տարիների ծախքերի հաշվին կատարվող ներդրումներն անահովելու համար, վորոնք բղխում են նրանց արտադրական, առևտրական և եքսպլուատացիոն, (չահագործման) ծրագիրն իրագործելու անհրաժեշտությունից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Յերկաթուղիների շրջանառության միջոցները տահանվում են նրանց շահագործման և կապիտալ շինարարության համար անհրաժեշտ միջոցների համաձայն:

2. Պետական միավորությունների, տրեստների և այլ տնտեսական կազմակերպությունների սեփական շրջանառու միջոցները պիտի բաշխվեն՝ նրանց կազմի մեջ մտնող տնտեսաշաղկի անցած արտադրական, տրանսպորտային և առևտրական ձեռնարկությունների ու կազմակերպությունների միջև, ինչպես նաև հայթայթող ու իրացնող կազմակերպությունների միջև, վորոնք անմիջականորեն կենսադրժում են արտադրությունը, հայթայթումն ու իրացումը կամ մատուցում են տնտեսական ծառայություններ:

Արտադրական ծրագրի կատարումն ապահովելու համար միավորություններն իրավունք ունեն իրենց տնտրինության տակ թողնել չբաշխված մի պահեստի գումար (ռեզերվ), վորի չափը չափարի անցնի ձեռնարկություններին տրամադրված սեփական շրջանառու միջոցների 10 տոկոսից:

Ձեռնարկությունների միջև բաշխված շրջանառու միջոցները չափը կարող է փոփոխության յենթարկվել՝ այդ միջոցները մեկնույն միավորության ձեռնարկությունների միջև վերաբաշխվելու կարգով միայն, ընդ վորում այդ վերաբաշխումը կարող է անդի ունենալ տարեկան արգֆինսյանը հաստատելու ժամանակ կամ արգֆինսյանը տարվա ընթացքում փոփոխելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, յերբ ձեռնարկության տարեկան հաշվետվությունից պարզվում է, վոր հաշվետու նյութերի համաձայն անհրաժեշտ է ուղղումներ մտցնել:

Առանձնակի դեպքերում, յերբ մի վորեն ձեռնարկության մեջ ժամանակավորապես դոյանում են սեփական շրջանառու միջոցները՝ ազատ դումարներ, միավորությունը կարող է ոգտադրժել այդ գումարները՝ նույն միավորության մեջ մտնող մի այլ ձեռնարկության համար, ընդ վորում միավորությունը պարտավորվում է վերադարձնել այդ գումարները վոչ ուշ, քան մեկ ամսից հետո: Յեթե վորեն ձեռնարկությունից ժամանակավորապես միջոցներ են հանվում, այս հանգամանքը տվյալ ձեռնարկության կուպից բանկային վարկի լրացուցիչ պահանջ չափի հարուցի:

3. Միութենական Ժողտնտգերխորհին, Հոդժողկոմատին, Մատժողկոմատին և միութենական այլ տնտեսական Ժողկոմատներին իրավունք է վերապահվում՝

ա) սեփական շրջանառու միջոցների տարեկան և յետամոյալային հաշվետվումների ֆինանսավորման համար հատկացվող գումարները բաշխելու դեպքում թողնել իրենց տնտրինության տակ պահեստի գումար (ռեզերվ), վորի քանակը չափի դեքտացիի բաշխվող գումարների 10%-ից:

բ) Ոգտադրժել վորեն միավորության շրջանառու միջոցները մի այլ միավորության կարիքների համար 10 տոկոսի սահմաններում (այս կետում նշված 10 տոկոսից անկախ), առատավելն մեկ ամսվա ժամկետում յետ վերադարձնելու պարտավորությամբ:

գ) Փոփոխել միավորությունների սեփական միջոցների չափը՝ տարեկան արգֆինսյանը հաստատելու ժամանակ կամ այդպիսին տարվա ընթացքում փոփոխության յենթարկելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, յերբ միավորության տարեկան հաշվետվությունից պարզվում է, վոր հաշվետու նյութերի համաձայն ուղղումներ մտցնելու անհրաժեշտություն է զգացվում:

4. Արտադրության ու շրջանառության ծափարման հետևանքով պետական միավորությունների, տրեստների և այլ տնտեսական կազմակերպությունների սեփական շրջանառու միջոցների անհրաժեշտ հավելումը ծածկվում է նրանց սեփական կուտակումների և համապետական ու տեղական բյուջեների հատկացումների

հաշվին: Սեփական չըջանառու միջոցների անհրաժեշտ լրացումների քանակն ու աղբյուրները վորոշվում են յուրաքանչյուր տարի՝ արդեֆինսյանը հաստատելու ժամանակ: Յեթե միավորությունների սեփական չըջանառու միջոցները լրացվում են նրա սեփական կուտակումների հաշվին, այդ դեպքում միավորությունը պարտավոր է ավելացնել առանձին ձեռնարկությունների չըջանառու միջոցները, թողնելով այդ ձեռնարկություններում նրանց ոգուտների մի մասը:

5. Պետական ձեռնարկություններին Պետրանկը կարճատև վարկ է տրամադրում միմիայն այն կարիքների համար, վորոնք կապված են ուղեգրված գումարների (СУММЫ В ПУТИ) ֆինանսավորման հետ, արտադրության սեզոնային պրոցեսների անվանավորման հետ, հումքի, վառելիքի, արտադրական ու ոժանդակ նյութերի սեզոնային պաշարների կուտակման հետ, չալարութված արտադրության մեջ ներդրումները ժամանակավորապես ավելացնելու հետ, պատրաստի ապրանքների սեզոնային կուտակման հետ, ինչպես և այն ժամանակավոր կարիքների համար, վորոնք բղխում են ապրանքների արտադրության ու չըջանառության ընթացքից:

6. Սույն վորոշման 5-րդ կետում նշված կարիքների համար Պետրանկը վարկեր է բացում՝ ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից 1931 թ. հունվարի 14-ին ընդունված «վարկային ռեֆորմի պրակտիկան բարելավելու միջոցների մասին» և 1931 թ. մարտի 20-ին ընդունված՝ «վարկային սխեմայի փոփոխելու, վարկային աշխատանքը ամրապնդելու և բոլոր տնտրդաններում տնտեսաճաշիվն ապահովելու մասին» վորոշումների հիման վրա, ընդ վորում վարկերը բացվում են վորոշ ժամկետներով և վարկերի մանրամասն ժամկետները ապահովվում են փոխառուների կողմից Պետրանկին օրվող պարտավորադրերով:

Այս պարտավորադրերով պիտի սահմանվեն վարկի չափը, նրա նպատակը, տալու և մարելու ժամկետները:

Յեթե փոխառուն չի կատարում Պետրանկի հանդեպ ստանձնած իր պարտավորությունները, Պետրանկը զիմում է վարկային ներգործության միջոցների, վորոնք նախատեսված են ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1931 թ. մարտի 20-ի վորոշման 9-րդ կետով:

7. Տնտրդանի բոլոր գրամական միջոցները, իննն դրանք սեփական, թե փոխառու, մուծվում են Պետրանկ՝ տնտրդանի հաշվարկային հաշվին, վորպիսի հաշվից տնտրդանը կատարում է բոլոր ծախքերը և վճարում իր բոլոր պարտավորադրերը:

ՇԱՆՈՑՈՒԹՅՈՒՆ.— Ժամկետային վարկերի դիմաց բանկերի հաշանելիք պարտքը արտացոլվում է հատուկ հաշվի մեջ:

8. Ինքնարժեքի դերպլանային իջեցման հետևանքով ձեռնարկության ստացած լրացուցիչ միջոցները, ինչպես և այն միջոցները, վորոնք աղատվում են միջոցների չըջանառությունը արագացնելու հետևանքով—մնում են ձեռնարկության տնտրինության տակ:

Այս միջոցները տրամադրվում են ձեռնարկությանը նրա մանեվրային ընդունակությունն ուժեղացնելու համար և չեն կարող դործադրվել կապիտալ ծախքերի համար մինչև վոր չդրուսը վեն դործառնական տարվա արդյունքները:

9. Յեղնելով 1931 թ. արդեֆինսյաններից և առ 1-ն հունվարի 1931 թ. բալանսներից, մինչև 1931 թվի ոգոստոսի 15-ը պիտի վորոշվի և ԱՊՍ-ին ի հաստատություն ներկայացվի՝ պետական միավորություններին, տրեստներին և այլ տնտեսական կաղմա-կերպություններին հատկացվելիք սեփական չըջանառու միջոցների չափը:

Հանրապետական ու տեղական նշանակություն ունեցող տնտեսական կաղմակերպությունների վերաբերմամբ այս աշխատանքը կատարում են ղաշնակից հանրապետությունների Ժողովրդական կոմիսարների խորհուրդները, ընդ վորում, հանրապետական ու տեղական նշանակություն ունեցող միավորությունների, տրեստների և այլ տնտեսական ձեռնարկությունների համար նրանց վորոշած չափը ներկայացվում է ԱՊՍ-ին ի հաստատություն:

10. Պարտավորեցնել պետական միավորություններին, տրեստներին և այլ տնտեսական կաղմակերպություններին, վորպեսզի նրանք՝ իրենց հատկացված սեփական չըջանառու միջոցների չափը ԱՊՍ-ի կողմից հաստատվելուց հետո տասն օրվա ընթացքում չըջանառու միջոցներ տրամադրեն իրենց կաղմի մեջ մտնող ձեռնարկություններին, ինչպես և տրեստների ու միավորությունների այն մասերին, վորոնք տնտեսաճաշիվ յեն անցել:

Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի նախագահ՝

Վ. ՄՈՒՈՏՈՎ (ՍԿՐԵՍԻՆ)

Աշխ. և Պաշտ. Խորհրդի քարտուղար՝ Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ

Մոսկվա, Կրեմլ, 23 հուլիսի 1931 թ.

ՊԵՏԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

I. ՊԵՏԲԱՆԿԻ ԴԵՐԸ ՅԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 1931 թվի հուլիսի 23-ին ԱՊՍ-ի ընդունած՝ «Տնտրդանների չըջանառու միջոցների մասին» վորոշումը հետեղակա-նորեն դարգացնելով 1931 թ. հունվարի 14-ի և մարտի 20-ի կառավարական վորոշումները, վերացնում է տնտրդանների չըջանառու միջոցների դիմադրկությունը, ճշտորեն սահմանադժում և տնտրդանների կուտակումների և նրանց այլ աղբյուրների հաշվին ֆինանսավորվող օրյեկտները և բանկային վարկավորման օրյեկտները:

Դրա համաձայն ել փոխվում են Պետրանկի վարկային աշխատանքի բովանդակությունն ու ձևերը: Այն հանգամանքը, վոր Պետրանկի կողմից տնտրդաններին ընձեռված վարկը սահմանա-

փակվում է վորոշ նպատակներով (ուղեղորված գումարներ, արտա-
դրութեան սեզոնային պրոցեսներ, նյութական արժեքների սեզո-
նային կուտակումներ և այլ ժամանակավոր կարիքներ, վորոշ
բղիտում են ավարանքների արտադրութեան և շրջանառութեան ըն-
թացքից), անհրաժեշտ պայմաններ են ստեղծում՝ բանկային վար-
կը ժամկետային և վերադարձ վարկի վերածելու համար:

Տնտրողանների շրջանառու միջոցների համարյա ամբողջ պա-
հանը մինչ այժմ լրացնում էր Պետրանկը, չնայած այն հանդա-
մանքին, վոր այդ միջոցների մի մասը բնականաբար շաղկապվե-
լով վերարտադրութեան պրոցեսի հետ, չէր կարող աղատվել և վե-
րադառնալ դեպի իր սկզբնական յերակետը՝ բանկը: Այսպիսով
բանկի միջոցների մի մասը դառնում էր անվերադարձ: Դրանով
իսկ Պետրանկը վորոշ չափով դառնում էր ֆինանսավորման մի որ-
դան և մոշ թե տնտրողաններին վարկավորող որդան: Պետրանկում
տակավին պահպանված ֆինանսավորման այդ մեթոդները անհրա-
ժեշտ են վերացնել: Հիմք ունենալով պլանն ու դրա շրջանակները,
բանկը տնտրողաններին միջոցներ պիտի տրամադրի վորոշ կոնկ-
րետ նպատակների համար և վորոշ ժամկետներով՝ սա նշանակում
է, վոր տնտրողանների ֆինանսական պլանների կենսագործումը
աւարտւմ միջոցով կոնտրոլի յեմքարկելու համար մա պիտի անցնի
բանկային առանձնահատուկ մեքոդներին:

2. Ուրբու միջոցով Պետրանկի կողմից կիրառվող կոնտրոլը
մի վերահսկողութուն է միջոցների այն ծախսարարու-
թեան վրա, վոր տնտրողանները պիտի կատարեն ի-
րենց արտադրական և ֆինանսական պլանների կատարման հա-
ժախմութեամբ: Այս կոնտրոլը կայանում է հետևյալում.

ա) Հանդիսանալով համայնացած սեկտորի հաշվարկման մի
կաղմակերպութուն, Պետրանկը չի թույլատրում, վոր տնտրո-
ղանները փոխադարձաբար միմյանց վարկավորելով՝ միջոցների
արտապլանային վերաբաշխում կատարեն:

բ) Հետեւողականորեն անցկացնելով վարկի ժամկետայնու-
թեան և բանկային միջոցների վերադարձի սկզբունքը և սահմա-
նելով վարկի ժամկետները պլանով նախատեսված շրջանառու-
թեան համեմատ, դրանով իսկ Պետրանկը դարկ է տալիս շրջանա-
ռությունն արագացնելուն և թույլ չի տալիս, վոր տնտրողաննե-
րը նյութական արժեքների գերապլանային կուտակումներ անեն:

գ) Տրամադրելով կարճատե վարկեր բացառապես նյութական
արժեքների համեմատ և պլանով նախատեսված սեզոնային ծախ-
քերի համեմատ, Պետրանկը տնտրողաններին հնարավորութուն է
տալիս ոգտագործելու լրացուցիչ միջոցները միայն այն չափով
վոր չափով իրապես ծախվելում են վարկավորվող տնտեսական
պրոցեսները:

դ) Արդելելով, վոր բանկի կարճատե ռեսուրսները շրջանա-
ռու միջոցների աղբյուր դառնան, վորպիսի միջոցները տնտրողան-
ները պիտի լրացնեն իրենց սեփական կուտակումների հաշվին,
ինչպես և չծածկելով տնտրողանների կրած վնասները, Պետրանկը

ստեղծում է մի այնպիսի ֆինանսական ռեժիմ, վորը տնտրողան-
ներին գերադանցորեն շահադրողում է՝ ի կատար ածելու իրենց
կոնտակումների պլանները և վարելու աշխատանքը իրական տնտե-
սահաշվի (хозрасчет) հիմունքներով:

ե) Վարկավորելով տնտրողաններին նրանց նյութական ար-
ժեքների իրական հավելման և պլանով նախատեսված սեզոնային
ծախքերի չափով, Պետրանկը վարկավորումը կապում է՝ հաշվե-
տու բալանսներն ու տեղեկութունները ժամանակին ներկայացնե-
լու հետ և դրանով իսկ կարտավորեցնում է տնտրողաններին, վոր
հաշվետվությունը նրանց այնպիսի հիմքերի վրա դնեն, վորպեսզի
նրանց տնտեսական գործունեյութեան ֆինանսական արդունքները
ժամանակին հայտնաբերվեն:

3. Վարկային աշխատանքի նոր ձևերը ուրբու միջոցով իրա-
կանացիող կոնտրոլը ներդաշնակութեան մեջ պիտի դնեն այն վորոշ
աղատութեան հետ, վոր պիտի ունենան տնտրողաններին իրենց
սեփական շրջանառու միջոցները տնորինելու գործում: Սրա հա-
մապատասխան ել՝ սեփական և փոխառու միջոցների ոգտագործ-
ման տարբեր ռեժիմ է հաստատվում:

Ռեժիմի այս տարբերությունը կայանում է նրանում, վոր
Պետրանկը լիմիտավորում է (лимитирует) փոխառական հա-
շիվները (ссудные счета), բայց նա չի լիմիտավորում տնտր-
ղանների հաշվարկային հաշիվները (расчетные счета): Ռեժի-
մի այս տարբերությունից հետևում է, վոր՝

ա) յեթե ներքին միջոցների մորիլիդացիայի, ինքնարժեքի
լրացուցիչ նվազման և այլ հանդամանքների շնորհիվ տնտրողա-
նը իր հաշվարկային հաշիվ մեջ միջոցներ կուտակելով ֆինանսա-
կան ռեզերվ է ստեղծում, սեփական միջոցների այսպիսի կու-
տակումը աղեցեղութուն չպիտի ունենա Պետրանկից ստացվող
վարկի չափի վրա:

բ) Եթե տնտրողանն իր սեփական շրջանառու միջոցների հա-
շիվն նյութական արժեքներ չի կուտակում, այս բացը չպիտի աղբի
բանկային վարկի չափի վրա, յեթե միայն Պետրանկի կողմից
վարկավորվող նյութական արժեքների սեզոնային կուտակումներն
իրոք տեղի չեն ունեցել:

Բանկի բռնած այս դիրքը բղիտում է նրանից, վոր տնտրողանը
լիակատար պատասխանատվութուն է կրում իր պլանը կենսադոր-
ծելու համար, հետևապես նաև՝ իր կուտակումները կատարելու
և սեփական շրջանառու միջոցներ կազմելու համար:

Եթե սահմանվեր մի այլ սխտեմ, յերբ Պետրանկը սեզոնային
կարիքների համար տնտրողանին տրամադրած իր ժամկետային
փոխառությունների (срочные ссуды) չափը մշտապես կա-
պեր այդ նույն տնտրողանի սեփական միջոցների հաշվին՝ կու-
տակվող նյութական այլ արժեքների մակարդակի հետ, դա
կնշանակեր, վոր Պետրանկը տնտրողանի հետ միասին իր վրա
պարտավորություն է վերցնում նրա պլանի կատարման համար և
դրանով իսկ բռնում է տնտեսական պրոցեսների պլանավորման և

կարգավորման այն ուղին, վորն արդեն դատապարտված է կառավարության կողմից :

Սակայն, միջոցները տնորինելու ասպարիդում տնտրողաններին ունեցած աղքատությունը կարող է իրականանալ միմիայն վարկային ռեֆորմի որենքի հիմունքներով, քանի վար այդ որենքով վարկային ռեսուրսների վերաբաշխումը ստորադրված է պլանին : Ուստի անթույլատրելի պետի համարել միջոցների տնորինությունն այնպիսի աղատությունը, վորը հանգում է տնտրողանների փոխադարձ վարկավորմանն, այսինքն, միջոցների արտապլանային վերաբաշխմանը :

Տնտրողանի բալանսում ապորինի դեբետորներ (պարտապաններ) կամ կրեդիտորներ (պարտատերեր) յերևան գալու դեպքում բանկը, բացի մեղավորներին որինական պատասխանատվության կանչելուց, նման տնտրողանների վերաբերմամբ պիտի կիրառի վարկային ներգործության միջոցներ (կրճատելով արվող փոխառությունները, դանձելով մինչժամկետային կարգով արդեն արամադրված փոխառությունները, յետկանչելով չողտադործված ակկրեդիտիվները և այլն) :

II. ՎԱՐԿԱՅԻՆ ՊԼԱՆԸ

4. Բանկային վարկավորման որյեկտների սահմանադժման հետևանքով վարկի պլանավորումը հատուկ բնույթ է ստանում ֆինանսական պլանավորման ընդհանուր համակարգության մեջ :

Վարկային պլանավորման խնդիրը կայանում է նրանում, վոր պլանը կազմելու ժամանակ հայտնաբերվեն թե Պետրանկի հաշվին վարկավորվող որյեկտների դինամիկան և թե տնտրողանների և այլ կազմակերպությունների այն ազատ միջոցները, վորոնք կուտակվելով Պետրանկում դրանց հաշվարկային ու ընթացիկ հաշվների մեջ, կարող են Պետրանկի կարճատև ներդրումների աղբյուր դառնալ :

Պետրանկի ամփոփված վարկային պլանը մտնում է Միության միասնական ֆինանսական պլանի մեջ, իբրև վերջինիս մի ինքնուրույն բաղկացուցիչ մասը :

5. Ի տարբերում նախկին կարգից, Պետրանկի վարկային պլանները պիտի նախատեսեն տնտրողանների պարտքի անհրաժեշտ փոփոխությունները և պլանավորվող ժամանակաշրջանի վերջը յենթադրվող լիմիտները, ընդ վորում այդ լիմիտները պիտի վերաբերեն միայն այն կարիքներին, վորոնք նշված են ԱՊԽ-ի հուլիսի 23-ի «Տնտրողանների շրջանառու միջոցների մասին» վորոշման մեջ :

Տնտրողանների արտադրական և առևտրական գործունեության ծավալման հետևանքով առաջացող կարիքները, վորոնք կարգված են շրջանառու միջոցների հավելումը ֆինանսավորելու հետ, ինչպես և նրանց բոլոր այլ կարիքները, վորոնք յենթադրված են քանկային վարկավորման, չպիտի արտացոլվեն Պետրանկի վարկային պլաններում :

6. Պահանջվող վարկերի մասին տնտրողանների ներկայացրած հայտերի (ЗАЯВКИ) վերաբերմամբ Պետրանկի բաժանմունքները տալով իրենց յեղրահացությունը, միաժամանակ իրենց վարկային պլաններում առանձնակի ցույց են տալիս, թե տնտրողանների հաշվարկային հաշիվների մնացորդների փոփոխությունները և թե մնացած կլիյենտների ընթացիկ հաշիվների փոփոխությունները : Տնտրողանների հաշվարկային հաշիվների յենթադրական փոփոխությունները ցույց են տրվում բանկի կողմից վարկավորվող ամբողջ կլիյենտությանի գծով, իսկ բանկի բաժանմունքի մնացած բոլոր կլիյենտների ընթացիկ հաշիվների յենթադրական փոփոխությունները նշվում են մի ընդհանուր գումարով :

Անհրաժեշտ է ի նկատի առնել, վոր լիմիտները սահմանվում են միմիայն տնտրողանների փոխառվական հաշիվների համար, իսկ տնտրողանների հաշվարկային հաշիվները, վորոնք արտացոլվում են տնտրողանների հաստատված ֆինալաններում, Պետրանկի կողմից լիմիտավորման չեն յենթարկվում :

7. Ինչպես վարկի պլանավորման (վարկային պլանը կազմելու) ժամանակ, այնպես նաև վարկային պլանի հաստատումից հետո լիմիտների վայրեջքի (СПУСК ЛИМИТОВ) ժամանակ անհրաժեշտ է ցույց տալ սեղոնային կարիքների համար նախատեսված պարտքի հավելման գումարը և միաժամանակ պիտի նշել, թե տվյալ տնտրողանը վոր յեռամասկում (կլադատում) և վոր որյեկտներին հատկացրած փոխառությունները պիտի մարի :

Լիմիտների սահմանման և վայրեջքի (տեղերին հաղորդելու) ժամանակ Պետրանկը համաձայնության գալով շահադրողված դեբատեսչությունների և միավորությունների հետ, վորոշում է փոխառությունների մարման պլանային ժամկետները, այսինքն՝ հետագա կլադատներում նվազեցնում է բանկային վարկի այն հավելումը, վորն առաջ է գալիս պլանավորվող կլադատում սեղոնային կուտակումներ կատարելու հետևանքով :

Տեղերին հաղորդված լիմիտները սահմաններում փոխառություններ տալով, բանկի բաժանմունքները վորոշում են (վերլուծելով տնտրողանի ներկայացրած նյութերը և հաշվի առնելով նրա տնտեսական գործունեության առանձնահատկություններն ու վաճառքի պայմանագրերը) փոխառությունների մարման կոնկրետ ժամկետները (լիմիտի վայրեջքի ժամանակ նշված յեռամասկի ամիսն ու որը) և տնտրողանից վերցնում ժամկետային պարտավորագրեր ըստ վորոշված կոնկրետ ժամկետների :

8. Վարկային պլանները կազմելու համար Պետրանկին անհրաժեշտ նյութեր են ծառայում՝ տնտրողանների հայտերը, վորոնցով նրանք գրանցում են պահանջվող վարկի գումարը՝ ինչպես յեռամասկի վերջին, նույնպես և յեռամասկի ընթացքում (սեղոնային հնարավոր տատանումների համար), ընդ վորում այդ հայտերին նրանք կցում են իրենց ֆինանսական պլանները, հաշվետու և պլանային բալանները (համապատասխան տնտեսական ցուցանիշներ) :

նիշներով), նաև այն նյութերը, վորոնք հիմնավորում են փոխա-
տվությունների մարման ժամկետները:

Հիշյալ նյութերի ձևերն ու ծավալը, ըստ ժողովրդական
տնտեսության առանձին ճյուղերի, վորոշում են միութենական
գերատեսչությունները Պետրանկի վարչության համաձայնու-
թյամբ, իսկ հանրապետական գերատեսչությունները Պետրանկի
համապատասխան գրասենյակների (կոնտորներին) համաձայնու-
թյամբ:

Այն տնտրողանները, վորոնք թեև բանկի կողմից չեն վարկա-
վորվում, բայց հաշվարկային կամ ընթացիկ հաշիվներ ունեն
բանկում, պարտավոր են ըստ վերջինիս պահանջի ներկայացնել
իրենց հաշվետու նյութերը:

9. Տնտեսական միավորները, ըստ վորոնց բանկի բաժան-
մունքները պլանավորում են վարկը և պլաններն ընթացքի յեղա-
նակը, պահպանվում են անփոփոխ:

Կվարտալային վարկային պլանները կառավարության կողմից
հաստատվելուց հետո լիմիտների ստորաբաշխումը միավորու-
թյունների և ձևանարկությունների միջև կատարվում է համապա-
տասխան գերատեսչությունների և միավորությունների միջոցով՝
իրենց տնտեսավարական գծով և միաժամանակ Պետրանկի ապա-
րատի միջոցով:

Գերատեսչություններն ու միավորությունները լիմիտները
ստորաբաժանելու ժամանակ պարտավոր են նշել վե՛ր միայն լիմի-
տի ընդհանուր բացարձակ գումարը առ յեռամսյակի վերջն (ցա-
յառեն կերպով արտահայտելով լիմիտի սեղոնային միջկվարտալա-
յին հավելումները), այլ և բանկային վարկի տոանձին որչիտանե-
րի (նյութական արժեքների տեսակների, սեղոնային ծախքերի,
ուղեգրված գումարների և այլն) գինամիկան:

10. Պետրանկի վարչությունը լիմիտների ստորաբաշխումը
կատարում է իրեն յանձնակա գրասենյակների միջև հետևյալ
կարգով.

ա) Միութենական և հանրապետական (ՌՍՖՖՀ) նշանակու-
թյուն ունեցող միավորությունների և ձևանարկությունների լի-
միտները հաղորդվում են գրասենյակներին՝ յուրաքանչյուր ձևո-
նարկության համար առանձնացած ձևով:

բ) Կոոպերատիվ միավորությունների և ուխտեմների լիմիտ-
ները հաղորդվում են գրասենյակներին՝ յուրաքանչյուր միավո-
րության կամ սխտեմի համար առանձնացած ընդհանուր գումա-
րով:

գ) Տեղական և հանրապետական նշանակություն ունեցող
միավորությունների և կազմակերպությունների լիմիտները հա-
ղորդվում են ընդհանուր գումարով, ընդ վորում հանրապետական
գերատեսչություններն ու գերատեսչությունների յերկրային մար-
մինները տեղեւում սահմանում են առանձին ձևանարկություն-
ների լիմիտները, համաձայնության գալով բանկի համապատաս-
խան գրասենյակներին հետ:

Առանձին տնտրողանների լիմիտների կայուն գումարները և
մարման պլանային (կվարտալային) ժամկետները հաղորդվում են
գրասենյակներին միմիայն սեղոնային կարիքների համար:

Ուղեգրված գումարների (СУММЫ В ПУТИ) լիմիտները հա-
ղորդվում են բանկի գրասենյակներին իրեն վերաստուղիչ թվեր,
առանձին տնտեսական կազմակերպությունների համար:

Այս վերաստուղիչ թվերից թույլատրվում են վորոշ չեղում-
ներ, վորոնք բղխում են տեղական պայմաններից և կապված են
ապրանքների իրացման ընթացքի և փաստաթղթերի չրջանառու-
թյան արագության հետ, սակայն այդ չեղումները կարող են կա-
տարվել վերաստուղիչ թվերի այն ընդհանուր գումարի չրջանակ-
ներում, վորը Պետրանկի վարչության կողմից սահմանված է
ալիյալ գրասենյակի համար իրեն ուղեգրված գումարների մի
ընդհանուր ամբողջական լիմիտ:

Պետրանկի յերկրային գրասենյակները հաղորդում են իրենց
ռայոնական բաժանմունքներին ուղեգրված գումարների ամբող-
ջական լիմիտի կայուն գումարը և առանձին տնտրողանների ուղե-
գրված գումարների վերաստուղիչ թվերը:

11. Տնտրողաններին արտադրանային ժամանակավոր փոխա-
տվություններ տալու համար Պետրանկի վարչությունը վորոշում
է իրեն յանձնակա գրասենյակների մանկրային ուղեգրվել չափը:

Պետրանկի ռայոնական բաժանմունքները կարող են սահման-
ված կվարտալային լիմիտներից բարձր փոխատվություններ տալ
միմիայն իրենց վերագատ (յերկրային կամ մարզային) գրասեն-
յակների ցույց տված յեղանակով ու չափով:

III. ՊԵՏԱՆԿԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆԻԸ

Ա. Տնտրգանների վարկավորման պայմաններն ու սրյեկտները.

12. 1931 թվի հուլիսի 23-ի որենքի համաձայն Պետրան-
կի բաժանմունքները վարկավորում են տնտրողաններին պլանային
լիմիտների չրջանակներում, տալով փոխատվություններ կոնկ-
րետ նպատակների համար և վորոշ ժամկետներով:

Տնտրողաններին վարկավորելու անհրաժեշտ նախապայմաննե-
րը կայանում են հետևյալում. Պետրանկի բաժանմունքները պիտի
ստանան տվյալ կլիյենտի պլանային լիմիտը. կլիյենտը բանկի
բաժանմունքին պիտի ներկայացնի համապատասխան միավորու-
թյունների կամ կազմակերպությունների կողմից հաստատված իր
ֆինանսական պլանը և դիրեկտիվ բալանսի վերջը, ալիյալ
պայանք գնորդների (пagoрoдчe պokynатeлeй) հետ կնքած
իր պայմանագրերը (ակցիայի, վերադիր վճարների և փոխա-
գրությունների վերաբերմամբ), վորպիսի պայմանագրերը բան-
կին անհրաժեշտ են ուղեգրված գումարների դիմաց տրվող փո-
խատվությունների ժամկետները վորոշելու համար, ինչպես նաև
այլատեղ մատակարարողների հետ կնքած այն պայմանագրերը,
վորոնք նախատեսում են ակկրեդիտիվների կամ հատուկ հաշիվներ

քի միջոցով կատարվող հաշվարկները և վորոնք բանկի համար հիմք են ծառայում ակտիվիտիվների գիմաց փոխառություններ տալու համար. կլիյենտները ժամանակին պիտի ներկայացնեն նաև իրենց հաշվետու բալանսները:

Պետրանկի բաժանմունքները ստուգում են, թե արդյոք կլիյենտի գրեկտիվ բալանսով առ կվարտալի վերջը նախատեսված պարտքի գումարը (բանկին) համապատասխանում է թե վոչ նույն ժամանակի համար Պետրանկի վարչությունից կամ գրասենյակից ստացված լիմիտին: Յեթե պլանային պարտքի և լիմիտի գումարները չեն գուդադիսվում, այդ դեպքում բանկի բաժանմունքը կլիյենտին փոխառություններ չի տալիս, մինչև վոր չվերացվի այդ անհամապատասխանությունը:

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ.— Սույն կանոններում նշված վարկային աշխատանքի մեթոդները փոխարինում են պլանային լիմիտների սահմաններում բացվող վարկերի նախկին յեղանակները:

13. Դերեկտիվ բալանսի այն ակտիվ հոդվածները, վորոնց հավելման համար տվյալ յեռամսյակում բանկային վարկ է տրամադրվում, գետեղվում են դերեկտիվ բալանսի առանձին խմբակի (գրուպայի) մեջ իրենց ինքնուրույն հանրագումարով:

14. Բանկի բաժանմունքները ժամկետային նպատակային փոխառությունները տալիս են միմիայն առ կվարտալի վերջը նախատեսված լիմիտների սահմաններում, հաշվի առնելով թույլատրված միջկվարտալային գերվարկավորումները: Այս փոխառությունները ստորաբաժանվում են յերեք հիմնական խմբակների:

ա) Ժամկետային փոխառություններ՝ ապրանքանյութական արժեքների սեղոնային կուտակումների համար:

բ) Ժամկետային փոխառություններ՝ արտադրության և չրջանառության սեղոնային պրոցեսների հետ կապված ծախքերի համար:

գ) Ժամկետային վարկեր ուղեղված գումարների համար (հաշվարկման ակցեպտային ձևի գեպքում մատակարարողների համար, իսկ ակկրեդիտիվների և հատուկ հաշիվների միջոցով կատարվող հաշվարկների գեպքում՝ գնորդների համար):

Բացի այդ, Պետրանկի բաժանմունքները կարող են նաև տալ արտապլանային ժամկետային փոխառություններ ժամանակավոր կարիքների համար, վորոնք ըլխում են ապրանքների արտադրության ու շրջանառության ընթացքից, ընդ վորում նման փոխառությունները կարող են տրամադրվել այն յեղանակով և այն սահմաններում, վորոնք վորոշված են համապատասխան յերկրային գրասենյակների կողմից:

15. Բորը ժամկետային փոխառությունների հաշվառումը Պետրանկը կատարում է հետևյալ առանձին փոխառական հաշիվների միջոցով:

ա) Պլանային փոխառությունների հաշիվ, վորի մեջ արտադրվում են այն փոխառությունները, վորոնք տրամադրվում են

նյութական արժեքների սեղոնային կուտակումների համար, ինչպես և այն ծախքերի համար, վորոնք կապված են արտադրության ու շրջանառության սեղոնային պրոցեսների հետ:

բ) Ուղեղված գումարների գիմաց տրամադրված փոխառությունների հաշիվ:

գ) Արտապլանային փոխառությունների հաշիվ, այսինքն այն փոխառությունների, վորոնք տրված են տնտրողանների ժամանակավոր կարիքները հոգալու համար:

Փոխառությունը հաշվառման և յենթարկվում վերևը թված այս կամ այն հաշիվի միջոցով, նայած տնտրողանին ընձեռված փոխառության ընույթին:

Ամեն տեսակի փոխառություններ տալու դեպքում, անկախ նրանց բնույթից, փոխառության գումարը փոխանցվում է տվյալ տնտրողանի հաշվարկային հաշվի կրեդիտին:

16. Փոխառություններ տալու ժամանակ Պետրանկի բաժանմունքները տնտրողանից վերցնում են՝ սահմանված ձևի ժամկետային պարտավորագրեր:

Պետրանկի կողմից տրամադրվող փոխառության գիմաց ապահովություն են հանդիսանում այն նյութական արժեքները, վորոնց հավելումը հիմք էր ծառայել փոխառություն տալու համար, կամ հարկ յեղած դեպքում նաև հեղուկայամբ իրացվող այլ նյութական արժեքները, վորոնք գտնվում են տվյալ տնտրողանի տրամադրության տակ:

Բ. Ժամկետային պլանային փոխառություններ նյութական արժեքների սեղոնային կուտակումների համար.

17. Վորոշված լիմիտի սահմաններում Պետրանկի բաժանմունքները տնտրողաններին տրամադրում են ժամկետային նպատակային փոխառություններ միմիայն Պետրանկի կողմից վարկավորվող և գրեկտիվ բալանսով նախատեսված նյութական արժեքների իրական հավելման չափով: Նյութական արժեքների լուրջական հավելումը վորոշելիս ի նկատի յեն առնվում վոչ միայն պահեստներում գտնվող ապրանքները, վորոնք բանկային վարկի որյեկտ են հանդիսանում, այլ և համապատասխան ուղեղված ապրանքները (ТОВАРЫ В ПУТИ), անկախ այն հանդամանքից, թե վերջիններիս արժեքը վճարել և տնտրողանը թե միջ, միայն թե այդ ապրանքների հաշիվները Պետրանկի բաժանմունքն ստացած լինի:

Ծանոթություն 1. Նյութական արժեքների սեղոնային կուտակումները տեսնվում պիտի հասկանալ մնացորդների ամբողջ պլանային հավելումը, վորը գերազանցում է այն գրեկտիվ միմիտումից, վորը հաստատված է պլանի համաձայն, պիտի ծածկվի տնտրողանի սեփական շրջանառու միջոցներով:

2. Սույն կետում նշված ապրանքների տակ պիտի հասկանալ այն նյութական արժեքները, վորոնք գտնվում են տվյալ տնտրողանի և վորոնք առաքված են նրան արտադրողի կողմից, բայց դեռևս գտնվում են ճանապարհին:



15185-57

18. Այն տնտրողաններին, վորոնց մոտ նյութական արժեքներ լինում, այլ միայն մի տեսակը (որինակ՝ միայն հում նյութերը, միայն վառելիքը և այլն), այդպիսի տնտրողաններին բանկը փոխառութիւններ և տալիս րացառապես նյութական արժեքներ այդ մեկ տեսակի հաւելման համար:

Այն տնտրողաններին, վորոնց մոտ սեղոնային տատանումներ չեն թարկվում են նյութական արժեքներ մի քանի տեսակները, փոխառութիւնները տրվում են կամ ստանձնապէս յորաքանչյուր տեսակի հաւելման համար և կամ թե՛ այդ արժեքներին ամբողջ խմբակի հանրագումարի հաւելման հետ, յեթե միայն այդ արժեքները կարող են բանկային վարկավորման որչեպ ծառայել: այդ արժեքներին խմբին չպիտի դասել պատրաստի ապրանքներն ու կերտվածքները, վորոնց հաւելման համար փոխառութիւնները բոլոր դեպքերում տրվում են մնացած նյութական արժեքներին զատված կերպով:

19. Նյութական արժեքների սեղոնային աճման համար Պետքանկը փոխառութիւններ և տալիս միմիայն այն մնացորդի սահմաններում, վորը նշված է դիրեկտիվ բալանսում (առ կլար-ապի վերջը), ընդ վորում միջկլարտալային գերվաքկալորումները հաշվի չեն առնվում:

Նյութական արժեքների մի վորեւ տեսակի վարկավորման առաւելագոյն սահմանը՝ դիրեկտիվ բալանսով նախատեսված այդ մեկ տեսակի մնացորդն է կադմում: Իսկ յեր փոխառութիւններ տրվում են նյութական արժեքների մի ամբողջ խմբակի աճման համար, այդ դեպքում առաւելագոյն սահման և հանդիսանում՝ տվյալ խմբակի համար դիրեկտիվ բալանսով նախատեսված մնացորդների հանրագումարը:

Ծանոթութեամբ. Այն դեպքերում, յերբ բանկը վարկավորում է նյութական արժեքների առանձին տեսակների սեղոնային կուտակումները, արժեքների մյուս տեսակների (այսինքն՝ տնտրողանի սեփական չընտելու միջոցների հաշվին կամ բյուջետային հատկացումների հաշվին հաշվող տեսակների) թերակատարումը կամ մնացորդների նվազումը չի կարող բանկային փոխառութիւնների չափը կրճատելու հիմք ծառայել, յեթե այդ փոխառութիւնները տրվում են պլանով նախատեսված արժեքների այն տեսակների սեղոնային հաւելման համար, վորոնք բանկային վարկի որչեպ են հանդիսանում:

20. Պետքանկի բաժանմունքները նյութական արժեքների իրական հաւելման դիմաց փոխառութիւններ են տալիս՝ հիմնվելով նյութական արժեքների մնացորդների (ներառյալ, համաձայն 17-րդ կետի, նաև ուղեղոված ապրանքները, լինեն դրանք վճարված կե չվճարված, միայն թե այդ ապրանքների հաշիվները բանկի բաժանմունքը ստացած լինի) չարժման մասին տնտրողանների ներկայացրած հաղորդագրութիւնների վրա:

Հիշյալ հաղորդագրութիւնները պիտի ընդգրկեն այն նյութական արժեքների մնացորդները (ի թիւս գրանց նաև ուղեղը-

ված ապրանքները), վորոնք տվյալ տնտրողանի համար այս կամ այն չափով բանկային վարկի որչեպ են հանդիսանում: Յուրաքանչյուր հոշվածի մնացորդը նշվում է առանձին՝ յերկու գումարներով, վորոնցից մեկը ցույց է տալիս հաղորդագրութիւնը ներկայացնելու ոչվա գումարը, իսկ մյուսը՝ վերջին տեղեկանքի գումարը:

Այդ հաղորդագրութիւնների մեջ պատրաստի ապրանքները ցույց են տրվում պլանային ինքնարժեքով, մնացած նյութական արժեքները, վորոնք յենթակա յեն վերամշակման կամ վորոնց իրացումը տեղի պիտի ունենա հետագայում, ցույց են տրվում նույնպէս պլանային ինքնարժեքով (պլանով նախատեսված դրաման արժեքին աւելացնելով վերադիր ծախքերը): Յեթե այդ նյութական արժեքների փաստական ինքնարժեքը պլանային ինքնարժեքից աւելի նվազ է, փոխառութիւնները տրվում են փաստական ինքնարժեքի հաշվով:

21. Այն դեպքերում, յերբ տնտրողանը ապրանքները վաճառում է ինքնարժեքից աւելի ցածր գներով, բանկը պատրաստի ապրանքների հաւելման համար փոխառութիւններ տալու ժամանակ յենում է վաճառքի գներից, վորպէսպի տնտրողանը հնարաւորութիւն չունենա իր վնասները բանկային միջոցներով ծածկելու: Այս սահմանափակումը չի տարածվում այն ձեռնարկութիւնների վրա, վորոնց հետ իրենց վերադաս միափորութիւնները, անկախ սահմանված վաճառքի գներից, հաշվարկները կատարում են պլանային ինքնարժեքով:

Գանի վոր «չափարտած արտադրութիւն» (незавершено произведѣно) հոշվածը կարող է թողարկել ձեռնարկութ. վնասները, բանկի բաժանմունքները չափարտված արտադրութիւնի սեղոնային հաւելման համար փոխառութիւններ տալու դեպքում պարտավոր են մանրադնին ստուգել, թե արդե՞ր հաղորդագրութիւնների մեջ նշված չափարտված արտադրութիւն մնացորդի գումարը չի՞ գերազանցում տնտրողանի համար հաստատված ուղեղային կալիուլացիայից: Եթե հայտնաբերվում է, վոր նա իրոք գերազանցում է, բանկի բաժանմունքները փոխառութիւնը տալիս են չափարտված արտադրութիւնի պլանային արժեքի հաշվով:

22. Պետքանկի բաժանմունքները պարտավոր են ստուգել՝ նյութական արժեքների մնացորդների չարժման մասին տնտրողանների ներկայացրած տեղեկութիւնները և սխտեմատիկորեն համեմատել նրանց հաշվետու բալանսների հետ:

Յեթե տնտրողանները վորոշված ժամկետին չեն ներկայացնում իրենց հաշվետու բալանսը, բանկի բաժանմունքը դադարեցնում է հետագա փոխառութիւնները, րացի ուղեղոված գումարների դիմաց տրվող փոխառութիւններից:

• Յեթե փոխառութիւնը տալուց հետո ստուգումը պարզում է, վոր արժեքների փաստացի մնացորդը չի համապատասխանում բանկին ներկայացրած տեղեկութիւնների տվյալներին, այդ դեպ-

քում բանկի բաժանմունքը անմիջապես դանձում է արված փոխառությունների ամբողջ գումարը և միաժամանակ սրբնական պատասխանատվության կանչում մեղավորներին:

Ծանոթություն: Յեթն տնտրական, յնայած բանկի բաժանմունքի նախագահացմանը, հաշվետու բաժանմունքը ներկայացնելու համար համապատասխան միջոցներ չի ձևանորիկ, բանկի բաժանմունքը կարող է դադարեցնել ուղեղոված գումարների դիմաց արվող փոխառությունները:

23. Պետրանկի բաժանմունքները փոխառությունների մարման ժամկետները դասավորում են այն կվարտալների միջև, վորոնք նախատեսված են լիմիտի վայրեջրի ժամանակ: Յեթն նախատեսված է փոխառությունների մարումը կատարել վոչ թե մեկ, բլլ մի քանի կվարտալներում, այդ դեպքում յուրաքանչյուր փոխառություն ժամկետներն, իրրե կանոն, դասավորվում են՝ համապատասխան կվարտալի վրա ընկնող տվյալ որյեկտի մարման գումարի հարարերություն: Որինակ՝ պլանով նախատեսված է, վոր արժեքների մի տեսակի դիմաց տնտրականի պարտքն առաջին կվարտալում ավելանում է մեկ միլիոն ուրլով, վորից 400 հազար ուրլին մարվելու յե յերկրորդ կվարտալում, իսկ 600 հազար ուրլին՝ յերրորդ կվարտալում: այո դեպքում հիշյալ գումարի հաշվից արամադրվող յուրաքանչյուր փոխառություն մարման ժամկետները 40 տոկոսով կրնկենն յերկրորդ կվարտալի և 60 տոկոսով յերրորդ կվարտալի մեջ:

Բանկի բաժանմունքները համաձայնության դալով տնտրականի հետ և ի նկատի առնելով վերլինիս գործառնությունների յենթադրական բնթացքն ու փաճաղի պայմանադրերը, դասավորում են մարման կոնկրետ ժամկետները յուրաքանչյուր կվարտալի մեջ հնարավոր համաչափություն:

24. Ամեն մի փոխառություն տալու ժամանակ Պետրանկի բաժանմունքները վերցնում են տնտրականից ժամկետային պարտավորադրեր: Պարտավորադրերի ժամկետները լրանալիս տնտրականը պարտավոր է հանձնարարել Պետրանկի բաժանմունքին, վորպեսզի վերլինի տնտրականի հաշվարկային հաշվից դուրս գրի համապատասխան գումարն ի մարումն նրա պարտավորադրի: Նման հանձնարարություն լացակայության դեպքում բանկի բաժանմունքը համապատասխան գումարները դուրս է պրում տնտրականի հաշվարկային հաշվից ինքնուրույնար:

Ժամկետային փոխառությունը մարելու համար տնտրականի հաշվարկային հաշվում միջոցներ չլինելու դեպքում Պետրանկի բաժանմունքը պարտավոր է անմիջապես դանձել ժամկետանց պարտք այն միջոցներով, վորոնք նախատեսված են ԺԿՊ-ի 1931 մարտի 20-ի վորոշման 9-րդ կետով, այն է՝ նա յետ է կոչում չողտագործված ակկրեդիտիներն ու հատուկ հաշիվները, ժամատում է տնտրականին պատկանող ապրանքա-նյութական արժեքները և այլն:

Մինչև վոր ժամկետանց պարտավորադրերը չիվին չվճարի, տնտրականը նոր փոխառություն չի ստանա, բացի ուղեղոված

գումարների դիմաց արվող փոխառություններից, ընդ վորում վերլիններին գումարներն ամրողովին գործադրվում են ժամկետանց պարտքի մարման համար:

25. Փոխառություն տալու ժամանակ նշանակվող մարման ժամկետները հանդիսանում են առավելագույն (վերջնական) ժամկետներ: Պետրանկից փոխառություններ ստացող տնտրականները՝ պարտավոր են պարբերաբար (վոչ պակաս քան ամիս յերկու անգամ) տեղեկություններ ներկայացնել նյութական արժեքների այն մնացորդների մասին, վորոնք այո կամ այն չափով բանկային վարկի որյեկտներ են հանդիսանում: նրանք պարտավոր են այդպիսի տեղեկություններ ներկայացնել նաև այն ժամանակաշրջաններում, յերբ նրանք նոր փոխառությունների կարիք չեն ունենում:

Յեթն հայտնաբերվում է, վոր տնտրականների նյութական արժեքների մնացորդները նվազում են ավելի վաղ, քան այդ նախատեսված է նրանց տված պարտավորադրերի ժամկետներով, այդ դեպքում պարտքի համապատասխան մարը դանձվում է ժամկետից առաջ:

Գ. Ժամկետային պլանային փոխառություններ, արտադրություն սեզոնային պրոցեսների հետ կապված ծախքերի հետ

26. Այն տնտրականներին, վորոնք արտադրությունը կապված է սեզոնային պրոցեսների հետ (դյուղամոնտաժություն, ձկնորսական տրեսներ, ջրային հաղորդակցության ձեռնարկություններ և այլն) փոխառությունները տրամադրվում են վոչ միայն նյութական արժեքների հավելման դիմաց, այլ և այնպիսի ծախքերի համար, վորոնք միաժամանակ չեն դուղադրվում՝ նյութական արժեքների աճման հետ, այսինքն՝ տրամադրվում են արտադրության պրոցեսներն ավանսավորելու կարգով:

Նման կարիքների համար փոխառություններ տրվում են՝ կամ տնտրականների արդեն կատարած ծախքերը հատուցանելու ձևով և կամ թե իրրե ավանսներ՝ պլանային ծախքերը հոգալու համար (բանկի և համապատասխան միավորությունների կամ տրեսների փոխադարձ համաձայնություն):

27. Այն տնտրականները, վորոնք ողափում են արտադրության սեզոնային պրոցեսների համար արվող վարկերով, անկախ այն հանգամանքից, թե նրանք ինչ կարգով են ստացել փոխառությունները, ներկայացնում են Պետրանկի բաժանմունքներին, բացի 12-րդ կետում նվլած նյութերից, նաև կվարտալային Ֆինանսական պլաններից բղխող ծախքերի ամսական պլանները: Պետրանկի բաժանմունքները այս պլաններն ողտագործում են՝

ա) տնտրականների կատարած ծախքերի և նրանց ներկայացրած պլանների համապատասխանությունն ստուղելու համար, յեթե փոխառությունները տրվում են արդեն կատարված ծախքերը հատուցելու կարգով:

բ) անհրաժեշտ ավանսների չափը վորոշելու համար, յեթե փոխառությունները տրվում են ավանսների կարգով:
